

ու կը նուաճէ Պօնտանը: Դը՛, որ 800 տունէ բաղկացած հայկական շրջանն էր մօտիկ Պօնտանի ու Շերմախի, հակառակ վերջիններուն հետ ունեցած թշնամութեանը՝ չեն նուաճուիր Շերմախցիներէ, բնակիչները ղինուած, վէս և ուղղիկ են:

Կ'ըսուի թէ վերջին Ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ, Օսմանեան կառավարութեան քիւրդ պատուիրակները երբ կ'երթան զանազան տեղեր քիւրդ զօրահանութեան, Օսման փաշա ալ (Պէտիրխանի որդիներէն մէկը) Պօնտան կ'երթայ, կը հաւաքէ ութ հազարի մօտ քիւրդ՝ ու կը տանի Կարսի շրջանը Ռուսներու դէմ պատերազմելու, ետ դառնալուն քիւրդները չեն վերադարձներ իրենց յանձնուած զէնքերը, ու Օսման փաշան ալ վերադառնալով, Դը՛ կը մտնէ ու կ'ազատաբերի. նա իր ազատամբական ամբողջ զօրքը կը կերակրէ Դըհեցուց պաշարով. Օսմանեան կառավարութիւնը նորէն կը զրկէ 15 վաշտի չափ զօրք ու Դը՛ը թնդանօթներով կը ուրմարկոծէ:

Այս աւերէն կ'սկսի դարձեալ Դը՛ի գաղթականութիւնը. Դը՛ը ունեցեր է երեք հայ գաղթականութիւն:

Առաջինը՝ Պէտիրխանի օրով կոչուած Պօնտանի հայ գաղթականութիւն. երկրորդը՝ Շէյխ Ճէլալէտտինի հայր Շէյխ Սապատուլլահի օրով, երրորդը՝ յիշեալ Դը՛ի գաղթականութիւնը Օսման փաշայի օրով: Այժմ Դը՛ը հազիւ թէ 200 տուն բնակիչ ունենայ:

Կ'ըսեն թէ Օսման փաշան իր հրամանները կ'ստորագրէր Օսման՝ իպնի Պէտիրխան, Միրի Պօնտան:

Շէյխ Սապատուլլահի օրով կ'սկսի հողային գրաւումները Խիզանի և շրջականերու մէջ. Շէյխ Սապատուլլահը կրօնի ազատութեան բացարձակ հակառակորդ մը լինելով, հայերու մէջ կը շրջէր ծածկուած երեսով, որպէս զի քրիստոնեայի երես չը տեսնէ. կամ քրիստոնեայ հայերը իր երեսը չը տեսնեն. որովհետեւ իր կարծիքով պղծութիւն մը կը համարուէր այդ, բնական է որ գրաւուէին իր բնակակից հա-